

**ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ԴԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

ՔՐԻՍՏԻՆԵ ՏԱՆԱՋՅԱՆ,

Շախմատ գիտահետազոտական ինստիտուտ,

ՀՊՄՀ դասախոս

Էլ. հասցե՝ kristinetanajyan@yahoo.com

ԼՈՒՍԻՆԵ ՏԱՆԱՋՅԱՆ,

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ,

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Էլ. հասցե՝ lusine.tanajyan@gmail.com

DOI: 10.24234/scientific.v2i45.100

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածի նպատակն է բացահայտել շախմատային նվաճումների դերը ուսումնական գործընթացում և սովորողների մոտիվացիայի բարձրացման գործում:

Ուսումնասիրությունն իրականացվել է ստանդարտացված հարցման (122) և փորձագետների հարցազրույցների (15) մեթոդներով: Հարցումները ցույց են տվել, որ շախմատում հաջողության հասած դպրոցական տղաների մեծամասնության համար նրանց առաջադիմությունը (58,1%) փոխվել է շախմատ խաղալու արդյունքում: Նույն պատկերն է աղջիկների դեպքում: Մեծամասնության՝ 59,1%-ի ցուցանիշը փոխվել է շախմատ խաղալու արդյունքում:

Կախված շախմատային հաջողության ազդեցությանից 7-12 տարեկան սովորողների մեծամասնության մոտ նկատելի է կրթական առաջադիմության դրական փոփոխություն:

Շախմատային հաջողությունը հիմնականում երեխային դրդում է սովորել հիմնականում մաթեմատիկա, մայրենի և օտար լեզուներ, իսկ մյուս առարկաները որոշ չափով, կարծես թե, դուրս են մնում երեխաների հետաքրքրությունների շրջանակից:

Հաղթանակների շնորհիվ սովորողները մոտիվացված են առաջինը լինել ուսման, սպորտի և ցանկացած գործունեության մեջ:

Ամփոփելով արդյունքները՝ պարզ դարձավ, որ շախմատային հաջողությունը դրական է ազդում երեխայի ուսումնական առաջադիմության վրա և դրդում երեխային ակտիվ ընդգրկվելու ուսումնական գործընթացում: Համեմատելով ծնողների և փորձագետների հետ կատարած ուսումնասիրության արդյունքները, կարող ենք արձանագրել, որ և՛ ծնողները, և՛ փորձագետները շեշտում են շախմատային կրթության դերը երեխայի ուսումնական առաջադիմության մեջ՝ ընդգծելով սպորտային հաղթանակները՝ որպես դաստիարակչական մոտիվացիայի խթանման և բարձրացման միջոց: Սպորտային մրցաշարերում հաճախակի հաղթանակները խթանում են ոչ միայն կրթական ոլորտում հաջողությունների հասնելու, այլև մասնակցելու առարկայական օլիմպիադաների:

Քանալի բառեր՝ շախմատ, շախմատային նվաճումներ և հաղթանակներ, ուսումնական գործընթաց, ուսումնական մոտիվացիա, ուսումնական առաջադիմություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի աշխարհում սպորտային գործունեության և մտավոր աշխատանքի միջև անմիջական կապն անհերքելի է և գտնվում է տարրեր գիտակարգերի լուսարձակի ներքո: Այս համատեքստում կարևորվում է շախմատը՝ որպես մարզաձև, ինչը պայմանավորված է այս մարզաձևի մտավոր կարողությունների զարգացման ներուժով (Trinchero R. & Sala, G., 2016): Մասնավորապես հանրակրթական ոլորտում շախմատի ներդրման փորձերը նաև մեծ դեր ունեն գիտական աշխարհի հետաքրքրությունների շրջանակում (Tanajyan K. et al., 2021; Jerim J. et al., 2016):

Չնայած ապացուցվել է շախմատի ազդեցությունը սովորողների ստեղծագործական մտածողության, ինտելեկտուալ որակների հետագա զարգացման վրա, այդուհանդերձ, որպես ինտելեկտուալ մարզաձև, այն նպաստում է նաև մի շարք կենսաբանական, սոցիալական և հոգեբանական գործոնների ակտիվացմանը, քանի որ ստեղծում է բարենպաստ պայմաններ կրթական գործունեության համար, ինչն էլ իր հերթին կարող է պայմանավորել սովորողի նվաճումներն ու հաղթանակները (Sala G, Foley J. & Gobet F.; 2017): Քանի որ գիտական աշխատանքները բավականին սակավ են և տվյալ գործընթացների հետ

կապված խնդիրները խորապես բացահայտված չեն, ուստի հենվելով մի շարք հետազոտությունների վրա (Tanajyan K. et al., 2021; Mirzakhanyan R. Et el., 2017)՝ կարող ենք փաստել, որ Հայաստանի Հանրապետությունը, լինելով շախմատային կրթության առաջամարտիկը, իր վրա կրում է պարտավորություն աշխարհին ներկայացնել վերոնշյալ խնդրի հետազոտական հիմնավորումները՝ նպատակ ունենալով համաշխարհային կրթական դաշտում ցույց տալ տվյալ կրթական բարեփոխման ուղղությունը: Սպորտային հաղթանակների ու նվաճումների շնորհիվ երեխան կարող է գերազանց արդյունքներ ցուցաբերել դպրոցական մի շարք ուսումնական ծրագրերում (Peter G., Mirko W. & Julia Sch., 2016): Շախմատային հաղթանակների ու նվաճումների ազդեցությունը մեծ է սովորողների ուսումնական մոտիվացիայի վրա, իսկ ներկայիս պայմաններում, մասնավորապես ՀՀ-ում ուսումնական մոտիվացիայի նվազման հետ կապված էլ ավելի լայն հնչեղություն և արդիականություն է ստանում տվյալ թեմայի հետազոտումը:

Հետազոտության նպատակն է բացահայտել շախմատային նվաճումների դերը սովորողների ուսումնառության գործընթացում և ուսումնական մոտիվացիայի բարձրացման գործում: Նպատակից առանձնացվել են հետազոտության հետևյալ խնդիրները.

1. պարզել շախմատի՝ որպես մարզաձևի ազդեցությունը սովորողի ուսումնական առաջադիմության վրա:
2. Դուրս բերել սովորողի մոտիվացիոն համակարգի բաղադրիչները և մոտիվացիայի վրա ազդող գործոնները:
3. Ուսումնասիրել շախմատային հաղթանակների և սովորողի ուսումնական առաջադիմության միջև առկա կապը ծնողների դիտանկյունից:
4. Ցույց տալ շախմատային մրցաշարերի դերը սովորողի ուսումնական վարքագծի մեջ:
5. Բացահայտել շախմատային հաջողությունների ազդեցությունը այլ ուսումնական առարկաների համատեքստում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունն իրականացվել է քանակական և որակական մեթոդների համալիր կիրառմամբ: Քանակական մեթոդներից կիրառվել է կիսաձևայնացված հարցման մեթոդը, որը հնարավորություն է տվել բացահայտել շախմատային

հաջողությունների ազդեցության առանձնահատկությունները՝ ուսումնական մոտիվացիայի վրա: Հարցումներն իրականացվել են ՀՀ Շախմատի ազգային ակադեմիայի հաջողություն գրանցած սաների (թվով՝ 122) ծնողների հետ: Կիրառվել է համատարած ընտրանք: Որակական մեթոդներից ընտրվել է հարցազրույցի մեթոդը, որն իրականացվել է փորձագետների հետ: Փորձագիտական հարցազրույցի համար կիրառվել է չափանիշների վրա հիմնված ընտրանք¹:


Փորձագիտական հարցազրույցների տվյալների վերլուծությունից պարզ է դառնում, որ այսօր կարևորվում է շախմատի՝ որպես ուսումնական առարկայի, դերը երեխայի տրամաբանական մտածողության, հիշողության, ուշադրության և երևակայության զարգացման գործընթացում: Շախմատային մտածողությունը երեխայի մոտ ձևավորում է լայն մտահորիզոն, այլընտրանքային մտածողության ձևեր: Փորձագետների մեծամասնության կարծիքով՝ շախմատային հաղթանակներն այսօր էական նշանակություն ունեն և դրական ազդեցություն են թողնում երեխայի ուսումնական գործընթացի, ուսումնական առաջադիմության և ուսումնական վարքի վրա:

Հետազոտության արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ տարբեր հաճախականությամբ հաղթանակներ ունեցող սովորողներից յուրաքանչյուրի ուսումնական գործընթացը յուրովի է կրում շախմատային կրթության ազդեցությունն իր վրա: Այսպես, *երբեմն* հաղթանակներ ունեցող սովորողների մեծամասնության 30%-ի մոտ շախմատային կրթության միջոցով ձևավորվել է տրամաբանական մտածողություն, 20%-ի մոտ՝ զարգացել է ուշադրությունը, 17,3%-ի մոտ ձևավորվել է մրցակցային ոգի և փոքր մաս են կազմում այն սովորողները, ում մոտ ձևավորվել է հաղթանակների ձգտելու պատրաստակամությունը, զարգացել է երևակայությունը և ամրապնդվել է հիշողությունը՝ յուրաքանչյուրը կազմելով 5,5%: *Մեծամասամբ* հաղթանակներ ունեցող սովորողների գերակշիռ մասի մոտ՝ 31,5%, ևս զարգացել է տրամաբանական հիշողությունը, 19,7%-ի մոտ՝ ուշադրությունը, 18,5%-ի մոտ ամրապնդվել է հիշողությունը, միայն 1,1%-ն է նշել, որ շախմատային կրթության արդյունքում երեխան դարձել է ավելի ինքնամփոփ: *Բոլոր մրցաշարերում հաղթող* սովորողների մեծամասնության մոտ ձևավորվել է մրցակցային ոգի՝ 26,1%, 22,2%-ի

¹ Հետազոտական տվյալների հավաքման գործընթացն իրականություն է դարձել ՀՊՄՀ ուսանողուհի Ս. Պետրոսյանի ջանքերով:

մոտ ձևավորել է հաղթանակների ձգտելու պատրաստակամություն, իսկ 4,9%-ի մոտ ամրապնդվել է հիշողությունը: Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ բոլոր մրցաշարերում հաղթող և մեծամասամբ հաղթող սովորողների մոտ հաղթանակների ձգտումը, մրցակցային ոգին ավելի ցայտուն է արտահայտված, քան այն սովորողների մոտ, որոնք երբեմն կարող են հաղթել մրցաշարերի ժամանակ: Կարող ենք ենթադրել, որ մրցաշարերի հաճախակի մասնակցության շնորհիվ սովորողի ուսումնական վարքը կարող է դրականորեն բարելավվել (տե՛ս գծապատկեր 1):

Երեխայի ուսումնական վարքը՝ շախմատային մրցաշարերում գրանցած հաղթանակների հաճախականությամբ



Փորձագիտական վերլուծությունը ցույց տվեց, որ «Շախմատ» ուսումնական առարկան նախ և առաջ իր դրական ազդեցությունն է թողնում սովորողի ուսումնական առաջադիմության բարձրացման վրա, սակայն ավելի քիչ թվով փորձագետներ ընդգծեցին, որպրոֆեսիոնալ շախմատով զբաղվելու դեպքում երեխայի ուսումնական առաջադիմությունը կարող է նաև տուժել, քանի որ ամենօրյա մարզումները երկար ժամանակ են խլում:

Քանակական հարցումները ցույց տվեցին, որ շախմատային հաջողություններ գրանցած սովորողների *արական սեռի* մեծամասնության առաջադիմությունը՝ 58,1%-ը փոփոխվել է շախմատով զբաղվելու արդյունքում, իսկ 41,9%-ի դեպքում այն չի փոփոխվել: Պատկերը նույնն է նաև *իգական սեռի* սովորողների մոտ. մեծամասնության՝ 59,1%-ի առաջադիմությունը, ըստ հարցման արդյունքների, փոփոխվել է շախմատով զբաղվելու արդյունքում, իսկ 40,9%-ի դեպքում չի փոփոխվել: Ինչպես տեսնում ենք ուսումնական առաջադիմությունը երկու սեռի դեպքում էլ փոփոխվում է հավասարաչափ:

Ըստ տարիքային առանձնահատկության՝ 7 տարեկան սովորողների մեծամասնության ուսումնական առաջադիմությունը փոփոխվել է դեպի դրականը. 78,2%, փոխվել է դեպի բացասականը՝ 21,8%: 8 տարեկան սովորողների մեծամասնության դեպքում՝ 65,3%, ուսումնական առաջադիմությունը փոփոխվել է դեպի դրականը, 34,7%-ինը՝ գրեթե մնացել է նույնը: 9 տարեկան սովորողների մեծամասնության՝ 78.9%-ի առաջադիմությունը փոփոխվել է դեպի դրականը, 10.5%-ի դեպքում համապատասխանաբար փոփոխվել է դեպի բացասականը և մնացել անփոփոխ: 10 տարեկան սովորողների մեծամասնության՝ 66.7% դեպքում՝ ևս առաջադիմությունը փոփոխվել է դեպի դրականը և ավելի փոքր մասի՝ 8.3%-ի դեպքում է փոխվել դեպի բացասականը: 11 և 12 տարեկան սովորողների դեպքում պատկերը էականորեն չի փոխվում. այս դեպքում ևս մեծամասնության մոտ ուսումնական առաջադիմությունը դրական տեղաշարժ է ունեցել: Ընդհանուր առմամբ տեսնում ենք, որ տարիքային առանձնահատկություններից և օրինաչափություններից կախված՝ երեխաների ուսումնական առաջադիմության փոփոխությունները շախմատային հաջողությունների ազդեցության պայմաններում էականորեն չեն տարբերվում, և 7-12 տարեկան սովորողների մեծամասնության ուսումնական առաջադիմությունն էականորեն դրական փոփոխություններ է կրում:

Հետազոտության ընթացքում իրականացվել է շախմատային հաջողություններ գրանցած սովորողների ուսումնական առաջադիմության փոփոխության վերլուծություն՝ ըստ շախմատային կարգերի: Այսպիսով՝ *4-րդ կարգի* սովորողների մեծամասնության՝ 52.4%-ի ուսումնական առաջադիմությունը փոփոխվել է, իսկ 47.6%-ինը՝ ոչ: *3-րդ շախմատային նկարգ* ունեցող սովորողների մեծամասնության՝ 70.8%-ի առաջադիմությունը փոխվել է, իսկ 29.2%-ինը՝ ոչ:

Պատկերը նույնն է նաև 2-րդ շախմատային կարգ ունեցող սովորողների շրջանում, մեծամասնության՝ 65.5%-ի առաջադիմությունը փոփոխվել է, իսկ 1-ին կարգ ունեցող սովորողների մեծամասնության՝ 66.7%-ի ուսումնական առաջադիմությունը չի փոխվել՝ ի տարբերություն մյուս կարգայինների: Այստեղ տեսնում ենք, որ մեծամասամբ փոփոխություն չի նկատվում 1-ին շախմատային կարգ ունեցող սովորողների ուսումնական առաջադիմության մեջ:

Անդրադառնալով ուսումնական գործընթացում շախմատային հաջողությունների ազդեցությանը՝ փորձագետները հիմնականում շեշտում էին, որ հաղթանակները երեխաներին, անկասկած, մոտիվացնում են ակտիվ ներգրավվածություն ունենալ ուսումնական գործընթացում, ունենալ մեծ պատրաստակամություն և ոգևորություն, լինել հաջողակ ուսման մեջ:

Քանի որ հետազոտության ընթացքում փորձել ենք պարզել, թե ինչպես է փոփոխվում երեխայի ուսումնական առաջադիմությունը շախմատային հաջողությունների գրանցման դեպքում նպատակահարմար էր պարզել երեխայի սովորելու ձգտումը ուսումնական մի շարք առարկաների տեսանկյունից, ուստի հետազոտության արդյունքների վերլուծության շնորհիվ պարզվեց՝ հարցվողների մեծամասնության՝ 75%-ի սովորելու ձգտումը բարձրացել է մաթեմատիկա առարկայի, 46.2%-ինը՝ օտար լեզուների, 45.2%-ը մայրենի լեզվի և 28.7%-ը բնագիտական առարկաների համատեքստում: Հարցվողների մեծամասնության՝ 57.3%-ի սովորելու ձգտումն անփոփոխ է մնացել երաժշտություն, 57.1%-ինը՝ կերպարվեստ, 55.1%-ը՝ տեխնոլոգիա, 34.2%-ը հումանիտար առարկաների շրջանակում: Հարցվողների մեծամասնության՝ 33.3%-ի սովորելու ձգտումը նվազել է բնագիտական առարկաների, 30.3%-ինը՝ հումանիտար առարկաների, 19.2%-ը մայրենի առարկաների շրջանակում: Ինչպես ենթադրվում էր, շախմատային հաջողությունները մոտիվացնում են երեխային սովորել մեծամասամբ մաթեմատիկա, մայրենի և օտար լեզուներ, իսկ մնացյալ առարկաները որոշ չափով դուրս են մնում երեխաների հետաքրքրության շրջանակից:

Փորձագետների մեկնաբանությամբ շախմատային հաղթանակների շնորհիվ երեխաները ձգտում են լինել առաջինը՝ թե՛ կրթությանմեջ, թե՛ սպորտում, թե՛ ցանկացած գործունեության մեջ: Շախմատային հաջողությունների ազդեցությամբ՝ ուսումնական առաջադիմության դրական տեղաշարժի դեպքում նկատվում են

ուսումնական առարկաների նկատմամբ սովորելու ձգտման փոփոխություններ: Հարցվողների շրջանում մեծամասնությունը նշում է, որ մի շարք առարկաների շրջանակում երեխայի *ուսումնական ձգտումը բարձրացել է*, մասնավորապես շոշափելի են Մաթեմատիկա՝ 89,6%, Մայրենի՝ 55,3%, Օտար լեզուներ՝ 40,5%, և Բնագիտական՝ 34,1%, ուսումնական առարկաների շրջանակում առկա փոփոխությունները, որտեղ սովորողների սովորելու ձգտումը նշանակալիորեն բարձրացել է: *Ուսումնական ձգտումը* նվազել է մեծամասամբ բնագիտական և հումանիտար առարկաների շրջանակներում համապատասխանաբար՝ 26,8% և 27,8%: Հարցվողների մեծամասնությունը նշել է, որ *ուսումնական ձգտումը մնացել է անփոփոխ* կերպարվեստ՝ 69%, երաժշտություն՝ 79,5% և տեխնոլոգիա՝ 71,2%, ուսումնական առարկաների շրջանակում:

Մի շարք փորձագետներ էլ նշեցին, որ այնուամենայնիվ շախմատում կարևորվում են անհատական առանձնահատկությունները, և եթե երեխան ունի գերազանց սովորելու մեծ պատրաստակամություն, համառություն, ապա սպորտային հաղթանակները կարող են պարզապես ոգևորելու համար լինել, այլ ոչ թե հանդես գալ, որպես խթան: Սովորաբար հաղթանակներ գրանցած սովորողները ուսուցման գործընթացում որևէ խնդիրների հետ չեն բախվում: Այս տեսանկյունից փորձագետները կարևորում էին ծնողների, ընկերների դերը, որոնք իրենց աջակցությամբ կարող են մոտիվացնել երեխային հաջողակ լինել ամենուր:

Ըստ մրցաշարերի և օլիմպիադաների ունեցած մասնակցության հաճախականության՝ փորձել ենք պարզել սովորողների ուսումնական առաջադիմության փոփոխությունները: Շախմատային *բոլոր մրցաշարերին և օլիմպիադաներին միշտ մասնակցություն ունեցող* սովորողների մեծամասնության 66,7%-ի առաջադիմությունը գրեթե մնացել է անփոփոխ, 60%-ինը փոփոխվել է դեպի բացասականը, իսկ 38,9%-ինը՝ դեպի դրականը: Շախմատային *մրցաշարերին և օլիմպիադաներին հաճախ մասնակցող* սովորողների մեծամասնության՝ 35,2%-ի առաջադիմությունը փոփոխվել է դեպի դրականը, իսկ 22,2%-ինը՝ մնացել անփոփոխ: Շախմատային *մրցաշարերին և օլիմպիադաներին երբեմն մասնակցող* սովորողների մեծամասնության՝ 40%-ի առաջադիմությունը փոփոխվել է դեպի բացասականը, 25,9%-ինը՝ դեպի դրականը և միայն 11,1%-ի ուսումնական առաջադիմությունը գրեթե մնացել է անփոփոխ: Վերլուծության արդյունքում

տեսնում ենք, որ մրցաշարերում մասնակցությունը ևս կարևոր ազդեցություն է թողնում ուսումնական առաջադիմության վրա:

Հետազոտությանը մասնակցած հաջողություններ գրանցած սովորողների ծնողների օգնությամբ փորձել ենք պարզել ուսումնական առաջադիմության փոփոխության դեպքում նրանց ուսումնական վարքի դրսևորման առաձնահատկությունները: Հետազոտության արդյունքներից պարզ դարձավ, որ շախմատային հաջողությունների արդյունքում *ուսումնական առաջադիմության դրական տեղաշարժ արձանագրած սովորողների* մեծամասնության ուսումնական վարքում նկատվում է դասերին մասնակցության ակտիվություն՝ 66,7%, տնային առաջադրանքները կատարելու ինքնուրույնություն՝ 77,4%, նաև ակտիվություն հիմնական սիրելի առարկաների շրջանակներում՝ 76.7%, բացի այդ հարցվողների մեծամասնությունը՝ 63.2%-ը, նշել է, որ երեխան հիմնականում ուշադրությունն ու ջանքերը կենտրոնացնում է շախմատի վրա: Ուսումնական առաջադիմության բացասական տեղաշարժ արձանագրած սովորողների մեծամասնությունը՝ 82%-ը հիմնականում պասիվ է դասաժամերին, 73.3%-ը տնային առաջադրանքները կատարում է ծնողների օգնությամբ, իսկ 69.2%-ն ակտիվ է միայն շախմատի դասաժամերին: Ուսումնական առաջադիմության գրեթե որևէ փոփոխություն չարձանագրած սովորողների մեծամասնությունը՝ 28.5%-ը միշտ ակտիվ է դասերի ժամանակ, 23.3%-ը հիմնականում ակտիվ է մի քանի սիրելի առարկաների շրջանակում, 23.1%-ը ակտիվ է միայն շախմատի դասաժամերին, իսկ 21.1%-ը հիմնական ուշադրությունը կենտրոնացնում է շախմատի դասաժամերի վրա:

Ըստ փորձագետների՝ շախմատային հաջողություններն ազդեցություն են թողնում ոչ միայն երեխայի ուսումնական վարքի, այլև սոցիալականացման վրա, որտեղ կարևորվում է նաև ծնողների, ուսուցիչների և մարզիչների դերը: Փորձագետների մեծ մասը, ելնելով երեխաների հետ ունեցած իրենց մասնագիտական գործունեության փորձից, նշում է, որ շախմատային հաջողությունները պայմանավորված են ոչ միայն երեխայի գիտելիքների պաշարով, կարողություններով և հմտություններով, այլև նրանց անձնային որակներով: Հաղթանակների են հասնում այն երեխաները, որոնք ունեն համագործակցային բարձր հմտություններ, պատրաստակամ են աջակցել իրենց ընկերներին, կիսվել շախմատային գաղտնիքներով: Այս տեսանկյունից մարզիչները կարևորում են

առողջ մրցակցության առկայությունը, որը ձևավորվում է միայն մարզչի օգնությամբ: Փորձագետների մի մասն էլ նշեց, որ շախմատային հաջողությունների խթան կարող է դառնալ նաև խաղընկերոջ հաղթանակը, և շատ սովորողներ այսօր ձգտում են շախմատային կարգով հավասարվել իրենց ընկերներին: Փորձագիտական հարցազրույցներից նաև պարզ է դառնում, որ հաղթանակները նպաստում են, որ սովորողները դառնան առավել հավասարակշիռ, ուշադիր և զգուշավոր, շախմատային օրենքների շնորհիվ սկսում են կարգուկանոն պահպանել, իսկ տարբեր երկրներում անցկացվող մրցաշարերի ժամանակ նոր մարդկանց, մշակույթների հետ շփման արդյունքում երեխաները դառնում են ավելի ինքնավստահ և շրջահայաց:

Անդրադառնալով շախմատային մրցաշարերին նախապատրաստվելու ծանրաբեռնվածությանն ու դրա ազդեցությանը ուսումնական գործընթացին՝ փորձագետները փաստեցին, որ ծանրաբեռնվածությունը բացասական ազդեցություն չի թողնում երեխայի ուսումնական գործընթացի վրա:

Փորձագետների մեծամասնության կարծիքով այսօր շախմատային կրթությունը խթանում է մի շարք ուսումնական առարկաների նկատմամբ սովորելու ձգտման բարձրացմանը: Այն դատողությունը, որ շախմատն ուղղակիորեն փոխազդում է մաթեմատիկայի հետ, փաստեցին նաև փորձագետները: Մաթեմատիկան նպաստում է խաղի ժամանակ մտքում հաշվարկներ կատարելու, խաղատախտակը պատկերացնելու, խնդիրներ լուծելու և այլ հաշվարկներ իրականացնելու համար, բայց հակառակը ևս կարելի է ապացուցել, որ շախմատի միջոցով երեխաները կարող են զարգացնել իրենց մաթեմատիկական կարողությունները: Փորձագետները փաստեցին, որ շախմատը ուղիղ կապի մեջ է գտնվում ոչ միայն մաթեմատիկայի հետ, այլև ուսումնական այնպիսի առարկաների հետ, ինչպիսիք են՝ կերպարվեստը, տեխնոլոգիան, որոնք խթանում են երեխայի երևակայության զարգացմանը, գրականությունը, որով պայմանավորված է երեխայի ստեղծարարությունը: Ըստ փորձագետների՝ այսօր կարևորվում է նաև տեղեկատվական տեխնոլոգիաների, մասնավորապես ինֆորմատիկա առարկայի կապը շախմատի հետ, քանի որ ինֆորմատիկայի շրջանակում երեխաները ծանոթանում են վիրտուալ համակարգում կրկնվող և ավգորիթմային գործողություններին, ինչպես նաև բազմատարբերակայնությանը, և այս ամենը

կարող է խաղային ռազմավարության հիմնաքարը լինել: Վերլուծելու ունակության զարգացումը հետագայում օգնում է նաև ֆիզիկա առարկան լավ հասկանալ, իսկ հիշողության զարգացումը նպաստում է հումանիտար մի շարք առարկաների լավ յուրացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով որակական և քանակական հետազոտությունների արդյունքները՝ պարզ դարձավ, որ շախմատային հաջողությունները դրական ազդեցություն են թողնում երեխայի ուսումնական առաջադիմության վրա, մոտիվացնում երեխային՝ ներգրավվելով ուսումնական գործընթացում: Համեմատելով ծնողների և փորձագետների հետ իրականացված հետազոտության արդյունքները՝ կարող ենք հստակ ընդգծել, որ թե՛ ծնողները, թե՛ փորձագետներն ընդգծում են շախմատային կրթության դերն ու ազդեցությունը երեխայի ուսումնական առաջադիմության վրա՝ մասնավորապես նշելով սպորտային հաղթանակների դերը, որպես ուսումնական մոտիվացիայի խթանման և բարձրացման միջոց: Սպորտային մրցաշարերում հաճախակի հաղթանակները խթան են հանդիսանում, որպեսզի սովորողները հաջողություններ գրանցեն կրթության ոլորտում՝ մասնակցելով մի շարք առարկայական օլիմպիադաների, նաև բարձրացնում են երեխայի ձգտումը՝ ներգրավվելու ուսումնական գործընթացում: Ըստ ծնողների՝ էական փոփոխություններ են նկատվում երեխաների ուսումնական վարքագծում՝ մասնավորապես ակտիվություն բոլոր ուսումնական առարկաների շրջանակներում և միաժամանակ ջանքերի կենտրոնացում շախմատի վրա: Փորձագետներն իրենց հերթին փաստեցին, որ սպորտային հաղթանակները միայն կարող են օգնել, որ երեխան ունենա բարձր ուսումնական առաջադիմություն: Շախմատային մրցաշարերում դրսևորվող պատրաստակամությունը, մրցակցային ոգին, համառությունը երեխայի մոտ պահպանվում է նաև ուսումնական վարքագծում, երեխան ձգտում է լինել առաջինը ամենուր: Շախմատային հաջողությունների միջոցով երեխաների մոտ ձևավորվում են մի շարք որակներ, կարողություններ և հմտություններ՝ տրամաբանական մտածողություն, ինքնավստահություն, ուսումնական գործընթացում ակտիվ մասնակցության ձգտում և այլ որակներ: Ե՛վ փորձագետները, և՛ ծնողները նշեցին, որ շախմատային հաջողությունների ազդեցությամբ երեխաների մոտ զարգանում են նաև համագործակցային

հմտություններ, իրավիճակում կողմնորոշվելու ունակություն, այլընտրանքային մտածողության ձևեր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Дворецкий М., Юсупов А.** (2009). *Техника в шахматной игре*. Харьков.
- Burgoyne a. P., Sala G., Gobet F., Macnamara B. N., Campitelli G., Hambrick D. Z.** (2016). The relationship between cognitive ability and chess skill: a comprehensive meta-analysis. *Intelligence*, 59, 72–83.
- Jerrim J., Macmillan L., Micklewright J., Sawtell M., Wiggins M.** (2016). Chess in Schools. Evaluation Report and Executive Summary. *Education Endowment Foundation*.
https://educationendowmentfoundation.org.uk/public/files/Projects/Evaluation_Reports/EEF_Project_Report_Chess_in_Schools.pdf
- Tanajyan K., Melkonyan N., Movsisyan S.** (2021). Chess as a Social Value. *Main Issues of Pedagogy and Psychology*, 19(1), 32–37.
<https://doi.org/10.24234/miopap.v19i1.390>
- Peter G., Mirko W., Julia Sch.** (2016). Achievement motive and sport participation. *Psychology of Sport and Exercise*, 27, 93–100.
<https://doi.org/10.1016/j.psychsport.2016.08.007>
- Mirzakhanyan R., Gevorgyan S., Sargsyan V., et al.** (2017). Analysis of the Efficiency of Teaching Chess in Schools. *Sociology Study*, 7(1), 36–42.
<https://doi.org/10.17265/2159-5526/2017.01.006>
- Sala G, Foley JP, Gobet F.** (2017). The Effects of Chess Instruction on Pupils' Cognitive and Academic Skills: State of the Art and Theoretical Challenges. *Frontiers in Psychology*, 8(238). <https://doi.org/10.3389/fpsyg.2017.00238>
- Trinchero, R., Sala, G.** (2016). Chess training and mathematical problem-solving: the role of teaching heuristics in transfer of learning. *Eurasia Journal of Mathematics, Science & Technology Education*, 12(3), 655–668.

REFERENCE LIST

- Dvoreckij M., YUsupov A.** (2009). Tekhnika v shahmatnoj igre (*Technique in chess*). Har'kov.
- Burgoyne a. P., Sala G., Gobet F., Macnamara B. N., Campitelli G., Hambrick D. Z.** (2016). The relationship between cognitive ability and chess skill: a comprehensive meta-analysis. *Intelligence*, 59, 72–83.
- Jerrim J., Macmillan L., Micklewright J., Sawtell M., Wiggins M.** (2016). Chess in Schools. Evaluation Report and Executive Summary. *Education Endowment Foundation*.
https://educationendowmentfoundation.org.uk/public/files/Projects/Evaluation_Reports/EEF_Project_Report_Chess_in_Schools.pdf
- Tanajyan K., Melkonyan N., Movsisyan S.** (2021). Chess as a Social Value. *Main Issues of Pedagogy and Psychology*, 19(1), 32–37.
<https://doi.org/10.24234/miopap.v19i1.390>
- Peter G., Mirko W., Julia Sch.** (2016). Achievement motive and sport participation. *Psychology of Sport and Exercise*, 27, 93–100.
<https://doi.org/10.1016/j.psychsport.2016.08.007>
- Mirzakhanyan R., Gevorgyan S., Sargsyan V., et al.** (2017). Analysis of the Efficiency of Teaching Chess in Schools. *Sociology Study*, 7(1), 36–42.
<https://doi.org/10.17265/2159-5526/2017.01.006>
- Sala G, Foley JP, Gobet F.** (2017). The Effects of Chess Instruction on Pupils' Cognitive and Academic Skills: State of the Art and Theoretical Challenges. *Frontiers in Psychology*, 8(238). <https://doi.org/10.3389/fpsyg.2017.00238>
- Trinchero, R., Sala, G.** (2016). Chess training and mathematical problem-solving: the role of teaching heuristics in transfer of learning. *Eurasia Journal of Mathematics, Science & Technology Education*, 12(3), 655–668.

РЕЗЮМЕ

РОЛЬ ШАХМАТНЫХ ДОСТИЖЕНИЙ В ОБРАЗОВАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ

МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ

ТАНАДЖЯН КРИСТИНЕ, ТАНАДЖЯН ЛУСИНЕ

Цель статьи выявить роль шахматных достижений в учебном процессе и в повышении учебной мотивации. Исследование проводилось с комплексным использованием количественных и качественных методов. Исследование проводилось методами стандартизированного опроса (122) и экспертного интервью (15).

Успехи в шахматах мотивируют ребенка изучать в основном математику, родной и иностранный языки, а остальные предметы несколько выходят за рамки детских интересов.

Благодаря шахматным победам учащие стремятся быть первыми в учебе, спорте и любой деятельности. Под влиянием шахматных успехов в случае положительного сдвига в учебной успеваемости наблюдаются изменения в стремлении к познанию учебных предметов.

Обобщая результаты качественного и количественного исследования, стало ясно, что шахматные успехи положительно влияют на успеваемость ребенка, мотивируют ребенка к включению в процесс обучения. Сравнивая результаты исследования, проведенного с родителями и экспертами, можно однозначно сказать, что и родители, и эксперты подчеркивают роль и влияние шахматного воспитания на успеваемость ребенка, особо отмечая роль спортивных побед как средства стимулирования и повышения образовательного мотивации. Частые победы в спортивных турнирах являются для учащихся стимулом к достижению успехов в области образования путем участия в ряде предметных олимпиад, а также повышают желание ребенка быть вовлеченным в образовательный процесс.

Ключевые слова: шахматы, шахматные достижения и победы, процесс обучения, мотивация, успеваемость.

ABSTRACT

ROLE OF CHESS ACHIEVEMENTS IN A PRIMARY SCHOOLCHILD'S LEARNING PROCESS

TANAJYAN KRISTINE, TANAJYAN LUSINE

The aim of the article is to identify the role of chess achievement in the learning process and in enhancing learning motivation. The research was conducted using a

complex set of quantitative and qualitative methods. The research was carried out by methods of a structured questionnaire survey (122) and an expert interview (15).

Success in chess motivates a child to study mainly mathematics, native and foreign languages, while the other subjects are somewhat outside the scope of children's interests. Due to victories, learners strive to be the first in their studies, in sports and in all activities. The impact of chess is a positive shift in academic achievement and a change in aspirations for learning subjects.

Comparing the results of the study conducted with parents and experts, it becomes clear that both parents and experts stress the role and impact of chess education on a child's academic performance, highlighting the role of sports victories as a tool to stimulate and enhance educational motivation. Frequent victories in sports tournaments are an encouraging factor for pupils to achieve educational success through participation in a number of subject, Olympiads increasing a child's desire to be involved in educational process.

Key words: Chess, chess achievements and victories, learning process, motivation, learning progress.

Հոդվածը ստացվել է՝ 02.04. 2023

Հոդվածը ուղարկվել է գրախոսման՝ 10.04.2023

Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 15.06.2023